

Ф. 946-9 ЕРБ

ИЗДАНИЕ
СОВЕТСКОГО ПРАВИТЕЛЬСТВА
(ЧУСТВОВАНИЕ)

9 О Р Д И
894 ГОДЪ „ИЗДАНИЕ“
1909

891.93

4-12

ԱՐԳԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

EROS, 30. 25

ԿԱՐԵՎՈՒԹՅՈՒՆ Առաջարկ Մատուցող Ա
(ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ)

Գ Թ Բ Ի Ս
ՏՊԱՐԱՆ, ՅԱՍՈՒՔՆ

25.07.2013

52118

NOV 1974

ԿԱՂԱՆԱԻՈՐԸ ՈՐԴԵՍՊԱՆ.

(ՊԱՏՄՈՒԱԾՔ)

Աշնանային խոնաւ երեկոյ էր:

Մի քանի ընկերներ կայարանում սպասում էինք զնացքի գալուն: Այս անգամ էլ ըստ սովորականին մօտ մի ժամ ուշացաւ և ժամը 8-ին փշփշոցն ու հեռոցը բերանին, հպարտ ու խրոխտ կերպով եկաւ ու կանգ առաւ:

Մարդիկ խումբ խումբ դէպի այս կամ այն դուռը դիմեցին, վագօններից իջնողների մէջ իրանց ծանօթներին, սիրելիներին դիմաւորելու յուսով: Իսկ ես որովհետեւ ոչ ոքի չէի սպասում, հոգատարութեամբ փաթաթուած վերարկուիս մէջ, ինչ որ ժողովրդական երգ քթիս տակը վրնթփնթալով, վագօնների երկարութեամբ, անցուդարձ անողների միջով, գնում, գալիս էի: Վերջի վագօններին հասնելով տեսայ երկաթէ ձողիկներով ամրացրած պատուհաններ:



55984-66

—Երեի կալանաւորներ են տարւում հիւսիս. մտածեցի ես եւ մօտեցայ վաղօնին: Պատաւհանների տակ սուխնաւոր գինւորներ կանգնած, հըռահուալով ծխում, իրանցից մօտիկ արևածազիկ չլութող գեւահաս օրիորդին, թէ տիկնոջ աչքունքով անում, բջնում, կողքը խըշաւում և քըրքջում էին: Ես կանգնած, գէպի պատուհաններն էի զիւտում: և ահա վաղօնում վակուածների մէջ աչքիս ընկաւ և մի ասողջ երիտասարդ, գուրեկան գէմքով մի պարօն, որը զրկած ունէր մի հրեշտականման մանուկ: Մանկան գեղեցիկ գէմքը պայծառ կերպով լուսաւորւում էր զիմացի զագային լուպտերից: Մանուկը հազիւ չորս տարեկան լինէր: Երիտասարդը նաւաստու տարագում էր. նրա խրոխա գէմքըն ու հպարտ հայեցքը, կըծքի տակ ծածկուած ըմբոստ ոգու և կորովի արտայայտիչն էին:

Մանկան ինդրանօք հայրը նաւաստին մօտեցաւ պատուհանին և բաց արաւ. մանուկը խակոյն մեկնեց իր կիսով չափ մերկ, ձիւնի ոլէս սպիտակ ձեռքը և բռնեց երկաթէ ձողիկից:

Լուս էին նոքա. հայրը թափծալի արտայայտութեամբ, բայց աղանաբար ծխում, ծուխը բարդ-բարդ գուրս էր հանում և դիտում հեռուն. Ես էլ նրանց էի նայում:

Երկու տիկիններ ման գալով եկան և կալանաւորի փոքրիկին տեսնելով, կանգ առան: Նո-

ցանից մէկը ձեռքի քսակից (բիգիկիւից) 10 կ. հանեց, մօտիկ կանգնած թուրք մըդավաճառից խնձոր տառւ և զինւորներին խնդրեց, որ տան այն փոքրիկին: Մի քանի քոպէից յետոյ խնձորները հասան փոքրիկին: Հայրը սրդան փայփայելով ինդրեց, որ նա տիկիններին զլուխ խոնարհի և շնորհակալութիւն յայտնի:

—Շատ շնորհակալ եմ. ասայ փոքրիկը, զլուխը մի քանի անկամ դէպի տիկինները շարժելով. իսկ նոքա չարժէ ասացին,-զգացուած սրբազն ուժ, ուժ շրջնջալով թողին նեռացն:

Ես աւելի մօտեցայ պատուհանին և կանդասայ զինւորների մօտ. ծխում էի: Զինւորներից մէկը ծխախոս խնդրեց. Ես բոլորին էլ ծըխել ասաջարկեցի և զրանով այսակեղ կանգնելու վստահութիւն ձեռք բերի:

—Հայրիկ, դարձաւ մանուկը նաւաստուն. ինչու մենք էլ գուրս չենք դալիս.

—Մեզ արգելուած է. պատասխանեց հայրը.

—Քաղաքից մինչեւ այստեղ բոլորը դուրս եկան, էլի ներս մտան, մենակ մեզ չժողոցին դուրս. արտընջաց մանուկը.

—Մեզ չի կարելի. սամութեամբ ովատախանեց նաւաստին.

—Ինչու մեզ չի կարելի. հարցրեց սրդին:

—Չիտեմ. պատասխանեց հայրը:

Մանուկը բարկացկոտ արտայայտութեամբ

հայում էր հօրը, որ մտազբաղ դէմքով դուրսն
էր հայում և ծխում:

Զինւորների արամագրութիւնը հիմնալի էր.
գեռահաս կինարմատը քիչ ճեռացել և դէպի ի-
րան էր քաշել զինւորներին, որոնցից ամեն մէկը
աշխատում էր իր կոպիտ, կատակներով նրան հա-
ճելի լինել:

— Հայրիկ, էն միւս վագօնների պատուհան-
ների վրայ էլ կան երկաթէ ձողեր, թէ մենակ
մերին է. լուռթիւնը ընդհատեց մանուկը.

— Միւսներին չկան. մեր պատուհաններին
քցել են, որ մենք դուրս չկանք.

— Ապա ինչո՞ւ մի քիչ առաջ ասացիր թէ
դուրս ենք գալու, հայրիկ.

— Որսվիետե դու լաց էիր լինում.

— Հայրիկ, եթէ իմ լաց լինելով բաց կանեն,
ուզում ես լաց լինեմ. հայրիկ, առ մի խըն-
ձոր էլ տամ քեզ. հայրիկ, ինձ նայիր. դժոհու-
թեամբ ասաց փոքրիկը, հօր բեխից քաշելով:

— Հանգիստ կաց. լաց հարկաւոր չէ: Տեղ
համնենք, մենք էլ դուրս կ'զանք. առանց փոք-
րիկին նայելու պատասխաննեց նաւաստին.

— Հայրիկ ապա մինչեւ որտեղ ենք փակու-
ած գնալու. մեղ չեն խղճում, ինչ է.

— Ո՞ւ. չեն խղճում. լոեց հայրը և ծխել ըս-
կոեց:

— Հայրիկ, այս ինձորներից քեզ էլ եմ տա-

լու, ուրախ կաց.

— Ես ուրախ եմ, բայիկո. բեր ձեռքդ համ-
րաւրեմ, ասաց հայրը և որդու ձեռքը համբուրեց:

Հնչեց երկրորդ զանզը:

— Հայրիկ, տես, այ էլի մարդիկ են գալիս
ներս մտնում. մենք մի անգամ էլ չ'իջանք:

— Սիրելիս, միայն մենք չենք այսպէս փա-
կուած. այ, տես քանի հոգի ենք այստեղ.
հայրը ցոյց տւալ քանաչափ կալանաւորներին,
որոնցից մէկը ծխում, միւսը երգում, երրորդը
պառկած քնած էր, ոմանք էլ դէպի դուրս էին
հայում:

— Բայց հայրիկ, դուք մեծ էք, իսկ ես փոքր,
ինձ ինչո՞ւ են փակ պահում. ես ինչ եմ արել.
լացազնեց մանուկը.

— Միրելիս, խելօք կաց. քեզ ես եմ պահում.
դու... կազատուես... կամացուկ մրմնջաց հայ-
րը և խորը ախ քաշեց:

— Հայրիկ ջան, երբ եմ ազատւելու, երբ.
ուրախութեամբ բացականչեց փոքրիկը հօր վզին
փաթաթուելով.

— Զգիտեմ. պատասխաննեց հայրը.

— Դու էլ կազատես, չէ՞ հայրիկ ով պիտի
ապատի. հետաքրքրութեամբ հարցըց մանուկը.
— Զգիտեմ.

— Է՞ն, չգիտեմ, չգիտեմ. մի հաստատ բան
չես տառմ, հայրիկ.

— Աիրելիս, խելօք կաց. հիմա դնացքը կը շարժւի. այ, այստեղ, քո տեղդ պառկիր. նաւաստին որդուն քնելու տեղը ցոյց տևաւ.

— Հայրիկ, որ ես ազատուեմ առանց քեզ չեմ գնալու ուրիշ տեղ. ասաց փոքրիկը և ցած իշտ հօր դրկից:

— Լաւ, լաւ պառկիր.

Որդին պառկեց. նաւաստին ինսամքով որդուն ծածկեց: Երբորդ զանգը հնչեց:

— Հայրիկ, խնձորիս կէսը ուտեմ, յետոյ քը նեմ. մնացածն էլ առաւօտը կուտեսը. համ հայրիկ. պառկած տեղից հարցրեց փոքրիկը.

— Լաւ, քնիր. մեղմօրէն ասաց հայրը:

Գնացքը սկսեց իր առաջին ծանր շարժումը. նաւաստին փակեց պատուհանը և գլուխը կախ քցած դրութեամբ երկու ձեռքով բռնած նստեց իւր տեղը:

Լուս և զլխակախ դրութեամբ նաւաստին անցաւ մի քանի կայարաններ. նիրհեց և ապա արթնացաւ նա մի քանի անգամ: Գիշերուայ ժամը 12-ն անցաւ, բայց նաւաստի հօր մտորումները չանցան նորանից. բոլի պէս թեժ էր նրա ուղեղը.

— Եւ սա կեանք է... հառաչեց նաւաստին, զլուխը աջ ու ձախ երերելով և շուրջը զիտելով:

Բայց երկու սունաւոր զինուորները, որոնք իւշ հեռու հրացաններին յենուած նիրհում էին,

վագօնում վանւող բոլոր կալանաւորները քնած էին:

Սկսուն, մնհանգիստ էր միմիայն նաւաստին. նա հոգեպէս տանջւում էր իր դառը կեանքը, իր անմիսիթար վիճակը սգալով.

— Եւ ես տանջւեմ... անվերջ տանջւեմ. օրերս մխկտալով անցկացնեմ. միւս կողմից էլ պակասը որդիս լրացնէ սիրտ կտրատող, մարդուս խելքից հանող հարցումներով. ահ, որքան անիծւած է կեանք ասած բանը. կեանք— լեզի, թոյն, մահ և ուրիշ ոչինչ:

Գոնէ սա էլ իր մօր հետ կազակների գընդակներից ընկած լինէր. և որքան երջանիկ կըլինէր: Սակայն ազատւեցաւ, ապրեց, միմիայն մինչ հոգուս խորքը թոյն սրսկելու համար:

Եւ եթէ սա այս կեանքում մնայ, հսկողութեան տակ մեծանայ, փակ գուռ, երկաթապատ պատուհաններ, սուինաւորի ներկայութիւն, չէ որ այս ամենը սրան երբէք ազատ մարդ չեն դարձնիլ, ազատ ոգի տալ չեն կարող: Այս մըթնոլորտում մեծանալով, սա ազատ կամք, սեպական համոզում չէ ունենալու. այլ կլինի ստորաքարշ, ցածահոգի և ստրուկ ու զուրկ ամենահասարակ ինքնասիրութիւնից անզամ:

Եւ այս բոլորից յետոյ սա ապրի, տաղի ինձ անիծելու... թքելու... և ինչո՞ւ ապրի, ինչո՞ւ...

Նաւասառու հարցումը մնաց օդից կախ, անպատճախան: Անցան բողէներ և նա շարունակեց.

Ես այն արի, ինչ որ մարդկանց մեծամասնութեան փափազն ու պարծանքն է, որի համար անուալող մարդկութիւնը գեռ շատ զոհեր կատայ: Եւ ես այդ զոհերից մի ողորմելին, անհշանդիւ: իսկ սա, այս վորքիկը ուր կամ ում մօտ թողնեմ, քանի որ ոչ բարեկամ և ոչ ազգամիան ունեմ: Ինձնից յետոյարան կանուանեն աքսորականի առականի որդի կամ կամ թողնեմ, քանի որ ոչ բարեկամ և ոչ ազգամիան ունեմ: Ինձնից յետոյարան կանուանեն աքսորականի առականի որդի կամ կամ թողնեմ, քանի որ ոչ բարեկամ և ոչ ազգամիան ունեմ: Եթէ իմ մօտից վերցնեն տանեն մանկական ազգամտարան: չէ որ այնակող եւ այնուիսի ողով են կրթում, որից ոչ մի առաջայ սպասելի չէ: Մայ այնտեղ աւելի անպատիւ կոչում կունենայ, առաջօրէ նոււած կանւանեն և սո կը լիի:

Եւ ոչ մի տեղ սրան թուղնելու չէ, որէտք որուածումը խանգարել, սրան յաւիտեան քընաց-նէ: Բայց ես կալանաւոր, զուրկ որ և է կերպնի ակուտեան հնարաւորութիւնից, և իմ ձեռքնի սրաւ արեան մէջ... ուժ... Յանկարծ հայ-նացը ընկան քնած որդու ձիւնի պէս ձերմակ դէմքին, ինքն իրան զսպելով աղեխարշ ձայնով մինչ չաց նաւասաթին, աչքերը մանկան ուղղելով. Եթէ ես սրան սպանեմ, իմ կեանքն եւ մի անուն կունենայ. մի լաս, որ եռ կարող

կլինեմ մինչի կեանքիս վերջը կրել:

Մի քանի բողէ վակօնի մէջ խորին լուս-թիւն տիրեց: Միմիայն անխաների արլուկորպի պատելու ձայնն էր, որ խանգարում էր տիրող լուսթիւնը և շտապցցնում կալանաւորին իրաշ գործելու իր անելիքը: Նրա զլխում յզացած ո-ձիրը նրան կաշկանդել էր: Եւ ահա զայդ ձեռքերով այլուղ ճակատը բոնեցնա, արինախառն աչքերը երեխային ուղղելով խոր մտորման մէջ ընկաւ: Իր նստած տեղում, նա մի արձանի էր նմանում, որ արտայատում էր վիշտ, տառապանք, թափսիծ, և աքսոր. յանկարծ սթափեց նա:

— Իմ վերարկուս բաւական է. կ'ձեմ վրան և ձեռքով շնչառութիւնը խանգարելով... հիա-նալի միջնց...

Նաւասաթին նայեց չորս կողմը, և իր գոր-ծելիք ոճիրին ոչ մի արթուն վկայ չտեսնելով, ձեռքը մեկնեց, վեր տառւ մի կողմ ընկած վե-րարկուն, տարածեց քնած որդու վրան, ինքն եւ զլխափերեր նստեց: Նստած էր նա լուս և կըծկու-ած. սան ու խոր թափանցող նայեացքր մի վճռական շարժումով վորելով, ամենայն ուժով աջ ձեռքի մասները իրար սեղմեց և ամուր կեր-պով բոնեց որդու քիթ ու բերանը: Զանցաւ մի քանի վայրկեան, ո՛րիս վրոշտաց երեխան և տեղից վեր թսնելով, կծած խնձորի կէոր, ձեռ-քում բոնած նստեց, կասկածու ու երկչու

արտայայտութեամբ դէպի հայրը դարձաւ:

— Հայրիկ ջան, մի մարդ ինձ ուզում էր խեղդի. լացագնեց մանուկը.

— Բնիր, քնիր, չի խեղդիլ. դողդոջուն ձայնով պատասխանեց հայրը, երեսը հակառակ կողմը դարձնելով.

— Ոչ, հայրիկ վախենում եմ, չեմ ուզում քնել. ակնածութեամբ հօրը նայելով հակառակեց մանուկը.

— Ահա, առ քեզ մի խնձոր էլ տամ. ասաց նաւաստին մի խնձոր դէպի որդին մեկնելով. փոքրիկը առաւ խնձորը և աշքերը շեշտակի կերպով հօրն ուղղած, պառկեց իր տեղում.

— Երեսքայն կողմը դարձրու և քնիր. ասաց նաւաստին երեսը ծածկելով.

— Հայրիկ, ուզում եմ քեզ նայեմ, որ այն մարդից այլ ես չ'վախենամ. եթէ ինձ էլլի խեղդելու լինի քեզ կասեմ. համ հայրիկ.

— Լաւ, լաւ, քնիր, չես վախենալ. Նաւաստին միամտացրեց որդուն և շուռ տւաւ նրան ձախ կողքի վրա, որպէսպի իրան չնայի. Անցաւ մի փոքր ժամանակ և մանուկը քուն մտաւ.

— Տանջանք, ու ցաւ է էլլի. կարծես թէ մահւանից առաջ աւելի է խելօքացել. և այդ շատ քնական է: Սակայն, ես որդեսպան... և իմ ձեռքերը թաթախւեն սրա արիւնով... բայց չէ որ ես ոչ մի ոճիր չեմ դործել և ահա այսօր..

ինչու համար, ինչու... անիրաւութիւն...

Բարձրաձայն գոռաց կալանաւոր նաւաստին. նրա ձայնից վագօնում քնածներից մի քանիսը արթնացան և աշքները տրորելով, «Է՞ սաւանան, քեզ տանի» ասացին ու նորից քուն մտան:

Պահապան զինւորներից մէկը մօտ եկաւ ըսպանաց նաւաստուն լուել և ձայն չ'հանել. իսկ միւս պահապանը բերանը մեծ բացած յորանջելով, աւելի մօտեցաւ և դիտեց կալանաւորի դէմքը ու ընկերին փրսփաց.

Սա խելագարուած է երկում աչքիս. հաստանան տանի քեզ.

Մանուկն էլ էր հօր ձայնի վրա վեր թռել քնից և ձեռքում պահած կիսատինձորը կըծոտելով, հօրն էր դիտում:

Նաւաստին ձեռքի մի շարժումով որդուն պառկելու նշան արաւ: Մանուկը հօր դէմքի զայրացկոտ արտայայտութիւնից վախենալով, շուռ եկաւ. խնձորի կէսը կերաւ վերջացրեց, ապա քնեց: Նաւաստին մի շարք անխմաստ շարժումներից յետոյ վեր առաւ վերաբկուն և տարածեց քնած մանկան վրա, ինքն իրան մըրմնջալով:

— Եւ ահա, նա կրկին քուն մտաւ. հայր... եթէ ինձ խեղդող մարդը նորից գայ ես քեզ կտանեմ... ուզում եմ քեզ նայեմ որ չվախենամ... ու Փ... որքան դժւար, որքան ծանր է:

— Բայց զիշերը անցնելու վրա է, վազը աղիս
ուշ կլինի, պետքէ վերջացնել. խելոյն... և աղա-
սին... նրան.

Ամենայն ուժգնութեամբ նա յարձակուեց
քնած որդու վրա, արգելեց շնչառութիւնը, և
այս անգամ իրազործեց իր որոշուծ գժոխացին
ծրագիրը:

Որդին ձայն հանել չկարողացաւ, նրա քիլ
ու բերանից արիւն հոսեց և կարմիր ներկեց նա-
ւաստու ձեռքերը:

Որդեսպան հայրը իրան այլ ևս կառավարել
չկարողացաւ. նա վեր կացաւ նստած տեղից,
ձեռքի շարժումով կանչելու նշան արաւ մօտիկ
կանոնած պահապանին: Պահապանը մօտ եկաւ,

— Տես, ինչպէս անշարժ և հանգիստ է. ես նը-
րան աղատեցի. որդու վրա ցոյց տւաւ նաւաստին:

Պահապանը վեր բարձրացրեց մանկան վրա
տարածած վերարկուի փեշը և նրան անշունչ ըն-
կած, դէմքը արիւնշաղախ տեսնելով, սարսափա-
հար յետ քաշուեցաւ, կալանաւորին դառնալով.

— Այդ գոււ արիր, գու... որդեսպան... սրիկայ
սպասիր, կտևանես. քեզ ցոյց կտան:

Որդեսպան բառը լսելուն պէս կալանաւորը
ամբողջ մարմնով ցնցուեցաւ և ապա բարձր ձայ-
նով գոռաց

— Կորէք, այստեղից դուրս... չէ որ ես խեղճ
եմ. ինչ էք ու զում ինձանից. ինչ ինչու էք ինձ

տանջում... սատանան տանի ձեզ. այն, միայն սա-
տանան... և զուք... չէ... լիմարներ... հրացան...
տես.

Եէպի իր անմեղ զոհը նայելով խորին յոգոց
քաշեց նաւաստին, և նրա արիւնուշտ աչքերից
արցունքի կաթիներ գլուխեցան ցած:

Այս իրարանցման և շփոթի վրա քնած կա-
լանաւորները մէկ մէկ զարթնում, և երբ ընկեր-
նելից լսում էին նաւաստու կատարած ոճիրի մա-
սնին, բոլորն էլ նետաքրքրութեամբ մօտենում,
զիտում էին նրա անմիխթար զրութիւնը, խելա-
զարի յատուկ անդեկ վիճակը և ապա որդու
անշունչ զիտակը տեսնելով զլուխները շարժում,
ափսոս, ափսոս էին կանչում:

Առաւօտ էր արդէն: Զինւորները կանոնած
կողանաւոր որդեսպանի կողքին, հսկում էին նրան:

Վերջապէս եկաւ մեծ կայարան. ման-
կան զիտակը ցած բերուեցաւ վագօնից: Հայրը
ոչ մի խօսք չարտասանեց. խոկ երբ տեսաւ որդու
զլխարկը յատակի վրա ընկած, վեր առաւ և կա-
խեց զլխափերել: Ապա նստեց նա պատուհանի տ-
ռաջ ձեռքերը ծոցը դրաւ և ինքն իրան մի տ-
զատ երգի եղանակ քթի տակ երգել սկսեց: Պա-
հապանները իսկոյն և եթ լոեցըին նրան:

Գնացքն առաջ անցաւ և հասաւ մեծ քաղաք:
Կալանաւորներին ցած բերին, նրանց թիերը ամուր
կերպով մէջքներին կանգեցին, և այնպէս տարան

գէպի բերդ:

Անցաւ մի ամբողջ տարի: Քաղաքից-քաղաք,
բերդից-բերդ տարւելով, կալանաւորներին ցրե-
ցին հիւսիսային զանազան քաղաքներում: Բան-
դերի խոնաւ նկուզներում ընկած, նոքա ծիւր-
ւել, մաշւել և չոր կմախք էին դարձել:


Աշուն էր. հեռաւոր հիւսիսի քաղաքներից
մէկի մօտ զանւող անտառի ծառերի տերեները
թորշոմել, գեղնել, և մեղմ քամու փշելուց իրար
յետեկից յաջորդաբար ընկնում էին: Ահա այդպիսի
մի ժամում, ութ զինւորներ, մէկ սպայ և մէկ
զատաւոր, մի նիհար ու գեղնած դէմքով երի-
տասարդ իրանց առաջը քցած, ձեռքերը մէջքին
կալած, եկան և կանգ առան անտառի ծայրում:

Երիտասարդին կապեցին մի չոր ծառի բլ-
նից և սպայի հրամանով ութ հրացանների մի-
անւագ կրակով, նրան գետին գլորեցին:

Դա կալանաւոր որդեսպան նաւասարին էր:



ՀՀ Ազգային գրադարան



NL0362496

52118

ԼՈՅՈ ԵԿ ՏԵԱԿՆ ԿԱՅԻ ՀԵՎԱԿԱՐԻ

Առլոիդ, Արևածագ քնար (սպառում) զինը 10 հ.
Առզանդարեան, Պատշերներ (4 սպառ.) , 15 հ.
» Կարմառուրը սրբազնութեան , , 5 հ.

ԳԵՐԵՑ ՀԱՅ

Վաճառառով են՝ Թիֆլիս «Գուտահերերդ» գրախանություն, հեղինակի մօտ, Գործու Օզան գործու, և նոյն տեղը «Ստուռն» գրախանությունը:

